

ՀԱՅԱՍՏԱՆ–ՔՐԴԱՍՏԱՆ. ԲԱՆՏԱՐԿՎԱԾ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅՈՒՆ*

Բանալի բառեր – Իրաքյան Քրդստան, Արևելյան հարց, Հայկական հարց, քրդական հարց, Սևրի պայմանագիր, Հոյբուն, Աբդուլլահ Օջալան, Քրդստանի Բանվորական կուսակցություն, Ժողովուրդների Դեմոկրատական կուսակցություն, Վիլսոնյան Հայաստան:

Իրաքյան Քրդստանի սեպտեմբերի 25-ի հանրաքվեով սկիզբ առած խոր հեղափոխումները վերջին ամիսներին մեր տարածաշրջանում արձանագրվող աշխարհաքաղաքական լուրջ փոփոխությունների առաջին ծիծեռնակներն են:

Ծավալվող գործընթացների հիմքում ընկած են ինչպես տարածաշրջանի որոշ երկրների ընթացիկ-քաղաքական հաշվարկները, այնպես էլ ողջ Մերձավոր-Միջին Արևելքի վերաձևման ռազմավարական նպատակները: **Առաջին** առումով դերակատարը Քրդստանի թիկունքին կանգնած Իսրայելն է, որը փորձում է սոսկ հակակշիռ ձևավորել դեպի Միջերկրական ծով «շիայական միջանցքի» ճարտարապետ Իրանի հանդեպ: Իսկ ահա **երկրորդ** իրողությունը պայմանավորված է «Մեծ Մերձավոր Արևելք» ծրագրի հեղինակ Միացյալ Նահանգների միանգամից մի քանի դաշտերում սկսած բարդ խաղով:

Դրանցից մեկը Հարավային Կովկասն է, որտեղ արդեն սկսում են ձեռքեր տալ անցած դարի 20-ական թվականներից տարածաշրջանն արքանի մեջ վերցրած ռուս-թուրքական «մուրձի» ու «սալի» շոշափուկները: Մեր տարածաշրջանի հյուսիսում, Վրաստանում ԱՄՆ-ը արդեն ամրապնդել է սեփական ներկայությունը, ուստի երբ հարավում էլ ձևավորվում է Իրաքյան Քրդստանը, անխուսափելի է դառնում ողջ Արևմուտքի առաջնային ուշադրության կենտրոնացումը Լեռնային Ղարաբաղի միջոցով տարածաշրջանի «աշխարհաքաղաքական ճոճանակի» վերածված **Հայաստանի** վրա: Միմյանց զուգահեռ սկիզբ առած ամերիկյան ու եվրոպական ճնշումները մի կողմից՝ Թուրքիայի, իսկ մյուս կողմից՝ Ադրբեջանի հանդեպ, գալիս են՝ հաստատելու այն իրողությունը, որ տարածաշրջանի կոտորակման և վերահիստեգրման համար Միացյալ Նահանգներին ու Եվրոպային հարկավոր են երկու հարևան «աշխարհաքաղաքական բանտախցերում» պարփակված Հայաստանն ու Քրդստանը:

* Ընդունվել է տպագրության 10.09.2017:

Թ. (ԺԵ) ԳԱՐԻ, ԹԻՎ 3 (59), ԽՄԽ-ՍԵՊՏԵՄԲԵՐ, 2017
ՎԿՄ ԿԱՄԱՆՈՎՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՒՆ

Այդ բանտախցերից **առաջինը** ձևավորվել է Լենին-Աթաթուրք դաշինքով ավարտված՝ Հայաստանի հողերի փուլային բաժանման արդյունքում:

Իսկ ահա **երկրորդը** 1930-ականների Սաադաբադի պակտով¹ քրդական հարցին բաժին ընկած մերձավոր-միջինարևելյան արքանն է:

Առաջինը փակում է հնարավոր աշխարհաքաղաքական տեղաշարժերի **ուղղահայացը**, իսկ երկրորդը՝ **հորիզոնականը**, ինչը նշանակում է, որ ինչպես անցյալում, այնպես էլ այսօր հայերի ու քրդերի ճակատագրերը հատվում են մեկը մյուսի հետ, բայց այս անգամ ոչ թե փոխադարձ շահերի անլուծելի հակասության, այլ երկու նեղլիկ «աշխարհաքաղաքական բանտախցերի» պատուհաններից ներս թափանցող լույսի ճառագայթների **խաչաձևումի** տեսքով: Այդ ճառագայթները լուսարձակում են հետևյալ ակնհայտ իրողությունը. 20-րդ դարակզբի կատակլիզմների արդյունքում ժամանակավորապես տարբեր «բանտախցերում» հայտնված Հայաստանն ու նոր ձևավորվող Քրդստանն իրականում **սահմանակից երկրներ** են: Իսկ երկու ժողովուրդներին վերջին երկու դարերի ընթացքում բաժին ընկած դժբախտությունների հիմնական պատճառն այն է որ նրանք իրենց ընդհանուր սահմանի ուրվագծերը ժամանակին տարբեր կերպ են պատկերացրել:

*Որովհետև ի պարբերություն դեռևս 1878-ին Արևելյան հարցից առանձնացած և Օսմանյան կայսրության կորորակման գործընթացի հիմնական ազդակի վերածված Հայկական հարցի, քրդական հարցը միջազգային դիվանագիտության մեջ է մտել մոտ 40 տարի անց՝ Սևրի պայմանագրով, որով հաղթական Անուրի դաշնակից Հայաստանի Հանրապետությունը ձեռք է բերել պարսկանորեն իրեն պարկանող 6 վիլայեթների ու Հայկական Կիլիկիայի մոտ **մեկ երրորդը**՝ մնացածը զիջելով Թուրքիային և սպագա Քրդստանին: Ասում ենք՝ սպագա, քանի որ Սևրով որոշվում էին միայն ինքնավարություն սրացող Քրդստանի մուրավոր սահմանները, բայց ոչ կարգավիճակը, և վերջինս անկախանալու իրավունք էր սրանալու, եթե մեկ տարվա ընթացքում դիմեր Ազգերի լիգայի խորհրդին²:*

Մինչդեռ Եվրոպայում հաստատված երկրորդների հորդորներով օրվան քրդական վերնախավն ավելին սրանալու նպատակով Ֆրանսիա ուղարկեց Շերիֆ փաշայի պարվիրակությունը և հավակնություններ հայտնեց առանց այդ էլ երեք մասերի փրոհվող հայկական հողերի՝ հայերին բաժին ընկած հարվածի հանդեպ: Մյուս կողմից էլ՝ տարվելով իր բառապաշարում լայնորեն «Քրդստան» հասկացությունն օգտագործող Մոսկովա Քենայի խոսարումներով՝ քրդերն սկրիվորեն մասնակցեցին նրա գլխավորած ազգայնական շարժմանը և Հայաստանի դեմ սանձազերծված պարերազմին:

Քենայի հետ համագործակցելու ճանապարհով քրդերը հոյս ունեին պահպանել Հայոց ցեղասպանության արդյունքում ձեռք բերած առեղի թալանը, իսկ Հայաստանի ոչնչացումով՝ ազարվել ցեղասպանության մեջ հանցակցի խարանից, բայց կրկնակի անգամ խարվելով՝ այդպես էլ ոչինչ չստացան: Փոխարենն իր իշխանության ամ-

1 Սաղմնավորումը սկսվել է Արարատի 1926-1930 թթ. քրդական ապստամբությունից հետո Իրանի ու Թուրքիայի միջև տեղի ունեցած տարածքների փոխանակումով և ավարտվել 1937 թ. հուլիսի 8-ին Իրանի շահի **Սաադաբադ** պայտում ստորագրված պակտով, որը հայտնի է նաև Արևելյան Աստանտա անվանումով: Նրա 4 մասնակիցներից (Իրան, Թուրքիա, Իրաք, Աֆղանստան) առաջին երեքը պարտավորվել են իրենց տարածքներում համատեղ ուժերով պայքարել քրդական անջատողականության դեմ:

2 Տե՛ս **Սահակյան Տ.**, Ցավալի պայմանագրեր, Եր, «Լուսակն», 2007, էջ 269:

րապնդումից հետո՝ 1922-1923 թվականներից, Քենայն անցավ քրդերի ճնշման և ուժացման քաղաքականությանը: Այդ պայմաններում 1920-ականների կեսերից սկիզբ առած քրդերի հակաթուրք ելույթների ընդացքում աստիճանաբար բյուրեղացավ հայ-քրդական փոխբացատող հավակնությունները մի կողմ դնելու և ընդհանուր թշնամու դեմ ուժերը համախմբելու անհրաժեշտության գիտակցումը: Դրանցից ամենահզորի՝ Արարարի 1926-1930 թթ. սպարամբության պարությունը բացահայտեց նաև այն իրողությունը, որ ինչպես հայ, այնպես էլ քուրդ ժողովուրդների անկախություն ձեռք բերելու խնդիրը բախվում է ոչ միայն թուրքական բռնապետության, այլև վերջին պահին նրան անպայման օգնության հասնող Խորհրդային Ռուսաստանի և ապա ԽՍՀՄ-ի հակազդեցությանը, ինչը և դարձավ այդ սպարամբության պարությունն խորքային պարձառը:

Ուստի այնքան ժամանակ, քանի դեռ մեր տարածաշրջանում պահպանվում էր ժամանակին Միմոն Վրացյանի մարնանշած ռուսական «մորձի» ու թուրքական «սալի»՝ արտաքուստ հակադիր, սակայն իր էության մեջ միասնական սքցանի հզոր ներգործությունը, ո՛չ հայ և ո՛չ էլ քուրդ ժողովուրդներն ի վիճակի չէին հասնելու իրենց ազգային իղձերի իրականացմանը:

Դրա նոր ու ամենավերջին վկայությունը ԽՍՀՄ-ի անմիջական աջակցությամբ 1978 թ. հիմնված և 1884 թ. Թուրքիայի դեմ զինյալ պայքար սկսած Քրդստանի Բանվորական կուսակցության արյունոտ պայքարի փեղատվությունն էր, որի առաջնորդ Աբդուլլահ Օջալանը վերջում անգամ քաղաքական սպասարան չստացավ Ռուսաստանում և Արևմուտքի հետ իրականացված «պրիմակոմիսն աժուրդում» վերածվեց պարզ մանրադրամի, ուստիև երկրներկիր դեզերելուց հետո ի վերջո առևանգվեց Թուրքիայի հարուկ ծառայությունների կողմից:

Ասվածից ակնհայտ է դառնում, որ տարածաշրջանում սկիզբ առնող աշխարհաքաղաքական տեղաշարժերի պայմաններում երկու բախտակից ժողովուրդները կամ մշակելու են ռազմավարական հեռանկարի ընդհանուր տեսլական, կամ էլ հայտնվելու են քրդերի ցեղասպանության ու Հայաստանի պատմական հեռանկարի կորստյան վտանգի առաջ: Ընդ որում խնդրի լուծումն ավելի հրատապ է հենց քրդական կողմի համար, որի ներկա քաղաքական հայտի լեգիտիմությունը չի ձանաչվում հարևան երկրների կողմից: Թուրքերը, արաբները, իրանցիները՝ յուրաքանչյուրն իրենց դիտանկյունից, մերժում են քրդերի ինքնորոշման իրավունքը, իսկ քրդական հայրենիքի գաղափարը պարզապես նոնսենս են համարում: Իրանի արևմուտքում ձևավորված, Միջագետքի հյուսիսում բնավորված և ապա դեպի Սիրիա ու Հայաստան տարածված քրդերի մեծ մասն այսօր ոչ միայն հեռու է իր պատմական հայրենիքից, այլև նրա հստակ ընկալումն էլ չունի: Դրան գումարվում է նաև Թուրքիայում բնակվող նրանց մի խոշոր հատվածի ուժացման իրողությունը և նույն գործընթացների տարածումը նաև այլ երկրներում:

Ուստի թեև ողջ 20-րդ դարի ընթացքում Հոյբունն ու ՔԲԿ-ն (PCC) կենտրոնացել էին Թուրքիայի հարավ-արևելքում քրդական պետություն հիմնելու խնդրի վրա, բայց այսօր Քրդստանը ստեղծվում է Իրաքի տարածքում: Այս կապակցությամբ Թուրքիայի Իմրալի կղզու բանտում գտնվող ՔԲԿ-ի հիմնադիր և առաջնորդ Աբդուլլահ Օջալանը վերջերս հրատարակված իր հատորներից մեկում դառնությամբ նկատել է, որ

Իրաքյան Քրդստանի ճակատագիրն իրեն հիշեցնում է ցեղասպանությունից փրկված «Փոքր Հայաստանի» ճակատագիրը: Նա գրում է. ««Իրաքյան Քրդստան» կոչվող երևույթը քաղաքական բեմահարթակին հայտնվել է այն ձևով, ինչը նման է հետևյալին. ձիշտ այնպես, ինչպես ի պատասխան հելլենների ու հայերի կողմից իրենց պատմական հայրենիքի կորստի՝ նրանց տրամադրվել է յուրահատուկ դիտտիկ սննդաբաժին՝ հայրենիքի փոքր կտորի տեսքով»³: **Սա խիստ կարևոր խոստովանություն է Թուրքիայի արևելյան երկրամասերի պատկանելության վերաբերյալ:**

Բայց ահա Ա. Օջալանի ազգակիցների մի մասն այդ «դիտտիկ սննդաբաժին» հանդեպ այլ վերաբերմունք ունի: Նրանք նման կերակրատեսակը դիտարկում են որպես 40 միլիոնի հասնող իրենց հայրենակիցներին կազդուրելու համար անհրաժեշտ նախաձեռնություն՝ **Հարավային Քրդստանի** տեսքով, որին հետևելու է ճաշը՝ **Արևմտյան Քրդստանի** ստեղծումով (ներկայիս Սիրիայի տարածքում), ապա ընթացքով՝ որպես «**Հյուսիսային Քրդստան**» (ներկայիս Թուրքիայի ողջ արևելքը, այդ թվում՝ Վիլսոնյան Հայաստանը), իսկ վերջում էլ աղանդերը՝ **Արևելյան Քրդստանի** (ներկայիս Իրանի տարածք) տեսքով: Ընդ որում՝ քրդերի ամենախոշոր զանգվածը և դրանով պայմանավորվող ամենամեծ հավակնությունները Թուրքիայի տարածքում են՝ թուրք-սիրիական ու թուրք-իրաքյան սահմանագծից հյուսիս-արևմուտքում հասնելով մինչև Դերսիմի, իսկ հյուսիս-արևելքում՝ Արարատով պսակվող Հայկական պարի լեռները, քանի որ զազաներին նույնպես նրանք համարում են իրենց ցեղակիցներ, իսկ հայերին, ասորիներին ու մյուս ժողովուրդներին դիտում են սոսկ որպես ապագա «Դեմոկրատական կոնֆեդերատիվ Քրդստանի» լիիրավ քաղաքացիներ: Իրա համար են Թուրքիայի քրդերն այսօր նախկին «Միացյալ և անկախ Քրդստան»-ի պահանջը քողարկել դեմոկրատական-կոնֆեդերատիվ Քրդստանի տեսլականով՝ ԲԲԿ-ի հիմքի վրա ստեղծելով նրա քաղաքական թևն ի դեմս «Ժողովուրդների դեմոկրատական կուսակցության» (HDP), որն իր ներկայացուցիչներն ունի այդ երկրի խորհրդարանում: Այսինքն՝ քրդերն այնքան են առաջադիմել, որ լիովի յուրացրել են բասկերի, իռանդացիների և եվրոպական այլ ժողովուրդների պայքարի հարուստ փորձը, բայց միևնույն ժամանակ նաև այնքան են կտրվել իրականությունից, որ «մոռացել են» ըմբռնել մեր տարածաշրջանի կոտորակման արևմտյան քաղաքականության հիմնական իմաստը՝ Մեծ Թուրքիան՝ Մեծ Քրդստանով փոխարինելու նպատակի կատարյալ բացակայությունը:

Ուրեմն Հայկական լեռնաշխարհի քարտեզի վերաձևումը պարզապես անհնար է իրականացնել առանց նրա տիտղոսակիր պետության ու ազգի՝ Հայաստանի ու հայության ակտիվ մասնակցության: Իսկ դրանում հայկական հավակնություններն ամենևին էլ «Մեծ Հայաստանի» պահանջ չեն, քանի որ Վիլսոնյան Հայաստանն ու Հայաստանի Հանրապետությունը կազմում են հայկական պատմական հողերի մոտ **մեկ երրորդը**: Նման քաղաքական հայտով մենք հավակնում ենք միայն Նոր ու Նորագույն ժամանակների **միջազգային իրավունքով** մեզ պատկանող Արևմտյան Հա-

3 **Абдулла Оджалан.** Курдская проблема и решение модели демократической нации. Кн. 5, М. 2015, с. 200:

յաստանի տարածքների մի մասին, այսինքն՝ Սան – Ռեմո – Սևր – Վիլսոնի Իրավարար վճիռ երկմիասնական փաթեթին՝ ելքով դեպի Սև ծով: Իսկ Վանի, Բիթլիսի և Էրզրումի նահանգներն ինչպես Ռուսաստանի կողմից 1917-ին ճանաչվել են որպես «հնուց ի վեր հայկական (исконно армянскими)»⁴, այնպես էլ 1920-ին դաշնակիցների ջանքերով պայմանագրային և արբիտրաժային ամրագրում են ստացել որպես Սևրի պայմանագիր ու Վիլսոնի Իրավարար վճիռ: **Մինչև Հոկտեմբերյան հեղաշրջումը Հայկական հարցի շուրջ Ռուսաստան-Արևմուտք խորքային հակասությունները հաղթահարվել են, իսկ ահա բոլշևիզմը, ինչպես հայտնի է, որևէ կապ չուներ ռուսական ազգային շահի հետ:**

1920 թ. նոյեմբերի 22-ի իր Իրավարար վճռով ժամանակի մեծագույն դեմոկրատ Վ. Վիլսոնը հստակորեն երեք մասի է բաժանել հայկական պատմական հողերը, որպեսզի նրանց համար պայքարող երեք ժողովուրդներից որևէ մեկը դժգոհ չմնա: Դա է եղել քաղաքակիրթ աշխարհի վերդիկտը, որի իրականացումը Լենին-Աթաթուրք դաշինքի ձևավորումով հետաձգվել է, բայց չի հանվել գերտերությունների հեռահար-ռազմավարական օրակարգերից: Ուրեմն եթե տարածաշրջանում սկիզբ առած հեղաբեկումների պայմաններում երկու բախտակից ժողովուրդների մոտ բացակայում է ռազմավարական հեռանկարի ընդհանուր ընկալումը, ապա քրդերի ցեղասպանության ու Հայաստանի պատմական հեռանկարի կորստյան վտանգները միասնաբար հաղթահարելու համար մնում է մեկ ճանապարհ՝ Վ. Վիլսոնի կողմից ժամանակին իրականացված արբիտրաժի արդյունքների ընդունումը:

Պատճառն ակնհայտ է. ինչպես **1878 թվականին** բալկանյան ժողովուրդներին իր վերահսկողության տակ պահելու համար օսմանյան վերնախավը խրախուսեց Կ.Պոլսի Հայոց պատրիարքարանի կողմից Բեռլին պատվիրակություն ուղարկելու քայլը՝ երկրի անդամահատումը նրա մասերի ինքնավարությամբ փոխարինելու նպատակով, այնպես էլ **1920 թվականին** Սևրի պայմանագրով Հայաստանի առանձնացումը կանխելու համար երիտթուրքերը և ապա քեմալականները խրախուսեցին Փարիզ մեկնած Շերիֆ փաշային ու քրդական շրջանակներին՝ նրանց խոստանալով ինքնավարություն: Ուստի բնական է, որ այսօր էլ քրդական հարցի լուծումը ձախողելու համար թուրքական սադրիչ քարոզչամեթոդն արդեն սկսել է խոսել քրդերի ձգտումների ու «Մեծ Հայաստանի» հայկական տեսլականի անլուծելի հակասության մասին: Ուրեմն այս անգամ էլ Հայկական հարցն է խաղարկվելու Թուրքիայի կողմից՝ քրդերի հավակնությունները զսպելու և ապա նրանց ցեղասպանությունն ու դուրս մղումն «արդարացնելու» համար:

Հետևությունը մեկն է. երկու ժողովուրդները կարող են խուսափել թուրքական խարդավանքների նույն կարուսելի մեջ **երրորդ անգամ** պտտվելու հեռանկարից միայն ու միայն մի դեպքում. եթե իբրև հիմք ընդունեն արդեն իսկ կայացած վիլսոնյան արբիտրաժի արդյունքները: Իսկ դրա համար նրանք դեռևս մտածելու ժամանակ ունեն, որովհետև մինչ այդ պարտավոր են գիտակցել իրենց առջև բացվող հստակ աշխարհաքաղա-

4 **Ռոստոմ**, Նամականի. մահուան ութսունամեակին առթիւ, Պէյրոթ, 1999, էջ 635:

քական տեսլականը: Տարածաշրջանային ստատուս-քվոյի պահպանման համար ներկայումս ձևավորված Ռուսաստան-Թուրքիա-Իրան «մարտավարական եռանկյունին» քաղաքակրթական ընդհանուր հիմք չունի և տեսանելի հեռանկարում պայթեցվելու է հենց իր՝ Ռուսաստանի կողմից: Որովհետև Ռուսաստան-Արևմուտք ներկա դիմակայության հիմքում ընկած է ոչ թե կողմերի հեռանկարային շահերի անլուծելի հակասությունը, այլ դեռևս 19-րդ դարում ռուս-բրիտանական հարաբերություններում արձանագրված և ի վերջո Անտանտի ձևավորմանը հանգեցրած մրցակցության ու համագործակցության հանգրվանների հաջորդականության սխեման: Ներկայումս պայքարը տեղափոխվել է 1918 թ. մարտին Ռուսաստանում ամկա վարչակարգի վերարտադրության տարբերակների շուրջ ընթացող սովետային առևտրի հարթություն, որում «ազնիվ մակլերի» դերն իրենց վրա են վերցրել Իսրայելն ու ԱՄՆ-ի հրեական լոբբին: Սա ցույց է տալիս, որ ինչպես քրդական, այնպես էլ հայկական հարցերը վաղ թե ուշ դառնալու են ոչ թե Ռուսաստան-Արևմուտք դիմակայության, այլ մրցակցության ու համագործակցության առարկաները:

Ուրեմն գլոբալ մակարդակի վրա՝ աշխարհաքաղաքական տեղաշարժերի տեսանելի հեռանկարում, Իրաքի, Սիրիայի և ապա Թուրքիայի բաժանման խնդիրն իրական է՝ որպես **Նոր Անտանտայի** ձևավորման հանգրվանային գործընթացի անխուսափելի հետևանք: Սակայն կարճաժամկետ առումով՝ տարածաշրջանային ուժերի ներկա դասավորության պայմաններում, քրդական հարցի հետագա սրումը հանգեցնելու է նրան, որ Իրաքյան Քրդստանը, վերածվելով Թուրքիայի, Իրանի ու Իրաքի ընդհանուր թիրախի, առավելագույնը ստանալու է Իրաքը կոնֆեդերացիայի վերածելու հնարավորություն:

Նման պայմաններում քրդերը չպետք է շտապեն սեպտեմբերի 25-ին իրենց ձեռք բերած անկախությանը հռչակագրային տեսք տալու հարցում: Իսկ հայերն իրենց հերթին, չպետք է ոգևորվեն Ղարաբաղի հարցում ստացած «շնչառության վերականգնման» հնարավորությունից և առաջիկայում Թուրքիայի դիրքորոշումներում հնարավոր «մեղմացումներից»:

Իրաքյան Քրդստանի անկախության հանրաքվեով սկիզբ առած գործընթացները վկայում են, որ աշխարհաքաղաքական տեղաշարժերի «զնացքը» պոկվել է իր տեղից և դանդաղորեն արագություն է հավաքում: Նորին մեծություն **Ժամանակը** աշխատում է ճնշված ու իրավագրված ժողովուրդների օգտին, ուստի նրանից առաջ ընկնելու փոխարեն հայերն ու քրդերը իրենց ներկա «աշխարհաքաղաքական բանտախցերից» պետք է լայն երկխոսություն սկսեն միմյանց հետ՝ ազատորեն քննարկելով փոխադարձ անվստահության պատճառ հանդիսացող թեմաները՝ սկսած Հայոց ցեղասպանության պատմությունից մինչև Հայաստանի ու Քրդստանի ապագա սահմանների ու բարիդրացիության հարցերը⁵:

Խմբ.:

5 Այդ նպատակն է հետապնդում «4.էմ»-ի ներկա համարում հրապարակվող մեր «Քրդերը և համաշխարհային պատմությունը» ուսումնասիրությունը, որում Իմրալիում բանտարկված Աբդուլլահ Օջալանի անձի հանդեպ խորին հարգանք դրսևորելու հետ միասին, փորձում ենք վեր հանել քրդերի իրական պատմությունը և հայ-քրդական հարաբերությունների դառը դասերը: Խմբ.:

ARMENIA AND KURDISTAN: NEIGHBORHOOD IN CUSTODY

Key words – Iraqi Kurdistan, Eastern Question, Armenian Question, Kurdish Question, Treaty of Sèvres, Alliance between Lenin and Ataturk, Khoyboun, Treaty of Saadabad, Abdullah Ocalan, Kurdistan Workers’ Party.

The geopolitical processes that began after the referendum of the Iraqi Kurdistan on September 25, 2017 come from both the current political calculations of separate states and the strategic goals of transforming the entire region. In order to neutralize the influence of the Russian «hammer» in the north of our region, the United States has already secured its presence in Georgia, therefore, while when forming the Iraqi Kurdistan, which casts doubt on the integrity of the Turkish «anvil», geopolitical pressure on the two geopolitical «locks» of our region begins. The first of these is based on the agreements signed by Lenin and Ataturk in 1920s. Relatively speaking, this is the «lock» put on the Armenian question, and the second one is the «lock» put on the Kurdish question, i. e. the Saadabad pact in 1930s. The first «lock» closes the future geopolitical changes in the vertical, and the second one – horizontally. And this means that, as in the past, so today, the fate of Armenians and Kurds intersect with each other, but this time not in the form of a head-on collision of mutual interests, but in the form of intersections of two neighboring geopolitical «prisons cells».

The program of fragmentation of the region is impossible without Armenia’s active participation. And in this case we do not pretend to the territory of «Great Armenia», as Wilson’s Armenia and the Republic of Armenia together with Artsakh and Nakhijevan make up one third of the historical lands of Armenia. On November 22, 1920, with his wise arbitration award, the President of the United States, the greatest Democrat of the time, W. Wilson clearly divided the historical territories of Armenia into three parts, so that none of the three parties – Kurds, Turks and Armenians, would be unhappy. This was the verdict of a civilized world, the implementation of which was postponed due to the formation of the alliance between Lenin and Ataturk, but not removed from the strategic agenda of the superpowers.

АРМЕНИЯ И КУРДИСТАН: СОСЕДСТВО ПОД СТРАЖЕЙ

Ключевые слова – Иракский Курдистан, Восточный вопрос, Армянский вопрос, Курдский вопрос, Севрский договор, альянс Ленин–Ататюрк, Хойбун, Саадабадский пакт, Абдулла Оджалан, Рабочая партия Курдистана.

Геополитические процессы, начавшиеся после референдума Иракского Курдистана 25 сентября 2017г. исходят как из текущих политических расчетов отдельных государств, так и стратегических целей преобразования всего региона. Соединенные Штаты на севере нашего региона уже обеспечили свое присутствие в Грузии, поэтому, при формировании Иракского Курдистана, начинается серьезное давление на две «геополитические камеры» нашего региона. Первый из них – основан на соглашениях Ленин–Ататюрк подписанных 1920–х гг. Условно говоря это «замок» поставленный на Армянский вопрос, а второй – «замок» поставленный на Курдский вопрос —это Саадабадской пакт в 1930–х гг.. Первый закрывает будущие геополитические перемены по вертикали, а второй – по горизонтали. А это означает, что как в прошлом, так и сегодня судьбы армян и курдов пересекаются друг с другом, но на этот раз не в форме лобового столкновения взаимных интересов, а в форме пересечения двух соседних «геополитических камер».

Программа фрагментации региона невозможна без активного участия Армении. В данном случае мы не претендуем на территорию «Великой Армении», так как Вильсоновская Армения и Республика Армения вместе с Арцахом и Нахиджеваном составляют всего одну треть исторических армянских земель. 22-го ноября 1920 года своим мудрым арбитражным решением президент Соединенных Штатов, величайший демократ того времени В. Вильсон четко распределил исторические территории Армении на три части, так чтобы ни одна из трех сторон,– армян, курдов и турок, не была бы недовольна. Это вердикт цивилизованного мира, реализация которого была отложена в результате формирования союза Ленин–Ататюрк, но не была снята со стратегической повестки сверхдержав.